«ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-ՏՊ-2»

ք. Երևան «17» մարտի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 693306.60 (Վեց հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր վեց դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Արֆարմացիա» ՓԲԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ք. Երևան, Ռաֆֆու 111
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 02505735
«ՀայէԿոնոմ բանկ» ՓԲԸ	«ՀայէԿոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008102713	Հ/Հ 163008100220
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան	Տնօրեն .....Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«17» մարտի 2018թ. N

N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-ՏՊ-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
5	33661000	Կատվախոտի հանուկ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	1.60	93600	58500	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	58500	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
12	33691220	Լիզինոպրիլի դիհիդրատ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	14.90	59361.60	3984	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	3984	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
28	33691191	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ), Սուպրաստին	<<Էգիս>>, Հունգարիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	56.70	34020	600	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	600	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
29	33691191	Սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք, Սուլֆոկամֆոկային	<<երևանի քիմ դեղ ֆիրմա>>, ՀՀ	Ներկայացվում է ստորև	սրվակ	56.00	3920	70	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	70	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
114	33631000	Օմեպրազոլ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղապատիճ	10.60	8480	800	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	800	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
116	33631000	Ֆամոտիդին	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	11.82	23640	2000	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	2000	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
124	33613000	Բիսակոդիլ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	5.10	27540	5400	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	5400	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
125	33613000	Կատվախոտի ոգեթուրմ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	22հկ	153.20	275760	1800	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	1800	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
126	33621440	Բենդազոլի հիդրոքլորիդ, Դիբազոլ	<<երևանի քիմ դեղ ֆիրմա>>, ՀՀ	Ներկայացվում է ստորև	սրվակ	24.80	2232	90	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	90	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
129	33622800	Պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ)	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	սրվակ	30	2700	90	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	90	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
131	33621620	Ֆուրոսեմիդ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	սրվակ	24.10	1205	50	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	50	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
138	33621760	Էնալապրիլի մալեատ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	4.70	16920	3600	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	3600	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
140	33671130	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), Դիմեդրոլ	<<երևանի քիմ դեղ ֆիրմա>>, ՀՀ	Ներկայացվում է ստորև	սրվակ	21.80	1962	90	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	90	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
141	33671130	Կետոպրոֆեն	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	պարկուճ	379	1137	3	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	3	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018

142	33671130	Դիկլոֆենակ նատրիում	<<Հեմոֆարմ>>, Սերբիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	15.60	46800	3000	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	3000	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
144	33671130	Դիկլոֆենակ նատրիում	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	պարկուճ	147	882	6	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
145	33631630	Էթանոլ, Բժշկական սպիրտ	<<Լիզին>>, Հայաստան	Ներկայացվում է ստորև	շշիկ	1042	4168	4	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	4	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
159	33651100	Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ)	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	31.90	57420	1800	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	1800	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
163	33651220	Պիրացետամ	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	սրվակ	37	2960	80	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	80	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
166	33661121	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), Անալգին	<<երևանի քիմ դեղ ֆիրմա>>, ՀՀ	Ներկայացվում է ստորև	սրվակ	31.10	2799	90	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	90	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
172	33671114	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)	<<Բորիսով>>, Բելոռուսիա	Ներկայացվում է ստորև	դեղահատ	2.80	5040	1800	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	1800	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
174	33691136	Նատրիումի քլորիդ	<<Ֆարմատեք>>, Հայաստան	Ներկայացվում է ստորև	պլաստիկե փլաստեր	172	10320	60	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	60	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
175	33691136	Նատրիումի քլորիդ	<<Ֆարմատեք>>, Հայաստան	Ներկայացվում է ստորև	պլաստիկե փլաստեր	174	10440	60	ք. Երևան, Անդրանիկի փ. 74	60	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
Ընդամենը							**693306.60**				

** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

Դեղորայք			
5	33661000	Կատվախոտի հանուկ	կատվախոտի հանուկ դեղահատեր թաղանթապատ 20մգ; (50/5x10/) բլիստերում, (50/2x25/) բլիստերում, (50) ապակե տարայում
12	33691220	Լիզինոպրիլի դիհիդրատ	լիզինոպրիլ (լիզինոպրիլի դիհիդրատ) դեղահատեր 10մգ; (24/1x24/) բլիստերում
28	33691191	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ), Սուպրաստին	քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) դեղահատեր 25մգ; (20/2x10/) բլիստերում, (20) ապակե տարայում
29	33691191	Սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք, Սուլֆոկամֆոկային	սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք լուծույթ ներարկման 49,6մգ/մլ+50,4մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ
114	33631000	Օմեպրազոլ	օմեպրազոլ դեղապատիճներ 20 մգ (20/2x10/) բլիստերում
116	33631000	Ֆամոտիդին	ֆամոտիդին դեղահատեր թաղանթապատ, 020մգ; (20/2x10/) բլիստերում
124	33613000	Բիսակոդիլ	բիսակոդիլ դեղահատեր աղելույծ թաղանթապատ 5մգ; (40/4x10/) բլիստերում
125	33613000	Կատվախոտի ոգեթուրմ	կատվախոտի ոգեթուրմ 200մգ/մլ; 30մլ ապակե շշիկում
126	33621440	Բենդազոլի հիդրոքլորիդ, Դիբազոլ	բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10/1x10/) ամպուլներ 1մլ բլիստերում, (10/2x5/) ամպուլներ 1մլ բլիստերում
129	33622800	Պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ)	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 20մգ/մլ; (5/1x5/) ամպուլներ 2մլ, (10/1x10/) ամպուլներ 2մլ, (10/2x5/) ամպուլներ 2մլ

131	33621620	Ֆուրոսեմիդ	Ֆուրոսեմիդ լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ
138	33621760	Էնալապրիլի մալեատ	Էնալապրիլ (Էնալապրիլի մալեատ) դեղահատեր 10մգ; (20/2x10/) բլիստերում
140	33671130	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), Դիմեդրոլ	դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ, (10) ամպուլներ 1մլ պիտակ բանդերոլ, (10) ամպուլներ 1մլ դիվիդելլա
141	33671130	Կետոպրոֆեն	կետոպրոֆեն դոնդող 25մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ
142	33671130	Դիկլոֆենակ նատրիում	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) դեղահատեր աղելույծ թաղանթապատ 50մգ; (20/2x10/) բլիստերում
144	33671130	Դիկլոֆենակ նատրիում	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) դոնդող արտաքին կիրառման 10մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ
145	33631630	Էթանոլ, Բժշկական սպիրտ	էթանոլ96%, 1000մլ շշիկ
159	33651100	Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ)	ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 500մգ; (10) բլիստերում
163	33651220	Պիրացետամ	պիրացետամ լուծույթ ներարկման 200մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ, (10/2x5/) ամպուլներ 5մլ բլիստերում
166	33661121	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), Անալգին	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) լուծույթ ներարկման 500մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ
172	33671114	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) դեղահատեր 8մգ; (50/5x10/) բլիստերում
174	33691136	Նատրիումի քլորիդ	նատրիումի քլորիդ լուծույթ կաթիլներարկման 9մգ/մլ; 100մլ պլաստիկե փաթեթ
175	33691136	Նատրիումի քլորիդ	նատրիումի քլորիդ լուծույթ կաթիլներարկման 9մգ/մլ; 250 մլ պլաստիկե փաթեթ

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար.....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ

Տնօրեն..... Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

«17» մարտի 2018թ.

N «ԱԱՀՀ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Ե-ՏՊ-2» ծածկագրով գնման պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	33661000	Կատվախոտի հանուկ			9360	18720	28080	37440	46800	56160	65520	74880	84240	93600	93600
12	33691220	Լիզինոպրիլի դիհիդրատ			5936.16	11872.32	17808.48	23744.64	29680.80	35616.96	41553.12	47489.28	53425.44	59361.60	59361.60
28	33691191	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ), Սուպրաստին			3402	6804	10206	13608	17010	20412	23814	27216	30618	34020	34020
29	33691191	Սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք, Սուլֆոկամֆոկային			392	784	1176	1568	1960	2352	2744	3136	3528	3920	3920
114	33631000	Օմեպրազոլ			848	1696	2544	3392	4240	5088	5936	6784	7632	8480	8480
116	33631000	Ֆամոտիդին			2364	4728	7092	9456	11820	14184	16548	18912	21276	23640	23640
124	33613000	Բիսակոդիլ			2754	5508	8262	11016	13770	16524	19278	22032	24786	27540	27540
125	33613000	Կատվախոտի ոգեթուրմ			27576	55152	82728	110304	137880	165456	193032	220608	248184	275760	275760
126	33621440	Բենդազոլի հիդրոքլորիդ, Դիբազոլ			223.20	446.40	669.60	892.80	1116	1339.20	1562.40	1785.60	2008.80	2232	2232
129	33622800	Պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ)			270	540	810	1080	1350	1620	1890	2160	2430	2700	2700
131	33621620	Ֆուրոսեմիդ			120.50	241	361.50	482	602.50	723	843.50	964	1084.50	1205	1205
138	33621760	Էնալապրիլի մալեատ			1692	3384	5076	6768	8460	10152	11844	13536	15228	16920	16920
140	33671130	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), Դիմեդրոլ			196.20	392.40	588.60	784.80	981.00	1177.20	1373.40	1569.60	1765.80	1962.00	1962.00
141	33671130	Կետոպրոֆեն			379	379	379	379	1137	1137	1137	1137	1137	1137	1137
142	33671130	Դիկլոֆենակ նատրիում			4680	9360	14040	18720	23400	28080	32760	37440	42120	46800	46800
144	33671130	Դիկլոֆենակ նատրիում			147	147	294	441	588	735	882	882	882	882	882
145	33631630	Էթանոլ, Բժշկական սպիրտ			1042	1042	1042	2084	2084	3126	3126	3126	4168	4168	4168

159	33651100	Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ)			5742	11484	17226	22968	28710	34452	40194	45936	51678	57420	574[illegible]
163	33651220	Պիրացետամ			296	592	888	1184	1480	1776	2072	2368	2664	2960	2960
166	33661121	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), Անալգին			279.90	559.80	839.70	1119.60	1399.50	1679.40	1959.30	2239.20	2519.10	2799.00	2799.00
172	33671114	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)			504	1008	1512	2016	2520	3024	3528	4032	4536	5040	5040
174	33691136	Նատրիումի քլորիդ			1032	2064	3096	4128	5160	6192	7224	8256	9288	10320	10320
175	33691136	Նատրիումի քլորիդ			1044	2088	3132	4176	5220	6264	7308	8352	9396	10440	10440
Ընդամենը					**70279.96**	**138991.92**	**207850.88**	**277751.84**	**347368.80**	**417269.76**	**486128.72**	**554840.68**	**624594.64**	**693306.60**	**693306.60**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ

Տնօրեն ..... Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ